ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀՈՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՏՈՆԱԳԻՐ 774
Երևան, Թումանյան 20, բն. 7
(010) 583595, (091) 561286
http://www.vardanyanhovik@yahoo.com

REPUBLIC OF ARMENIA
CHAMBER OF ADVOCATES
HOVIK VARDANYAN
LICENSE 774
Yerevan, 20 Tumanyan, app. 7
(010) 583595, (091) 561286
http://www.vardanyanhovik@yahoo.co

21 հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզպետ՝ պարոն Ա. Գրիգորյանին
ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան փող. 5

# ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի պարոն Գրիգորյան.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին հասցեագրված առանց համար գրությամբ հայտնել եք հետևյալը /մեջբերում/՝ *Ի կատարումն 2019 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 01/21.1/20040-19 Ձեր հանձնարարականի՝ տեղեկացնում ենք, որ դիմումատուի բարձրացրած հարցի վերաբերյալ մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի մասնակցությամբ* ***ձևավորված հանձնաժողովը կատարել է տեղում ուսումնասիրություններ,*** *արդյունքների վերաբերյալ տեղեկացվել են և Արզամ Կարապետյանը և Նունուֆար Կարապետյանը:* /մեջբերման ավարտ/:

Միաժամանակ, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.12.2018 թվականի թիվ 01/21.1/23293-19 հանձնարարականի, Ձեր մեկ այլ առանց համար գրությամբ հայտնել եք, որ **առաջարկվել է Արենի համայնքի ղեկավարին պատասխանել դիմումատուին և խնդրի կարգավորման վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:**

Իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18 –րդ հոդվածով, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6 –րդ հոդվածով, ՀՀ Սահմանադրության 51 –րդ հոդվածով ամրագրված պահանջներով, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. արդյոք վերը նշված հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները տրամադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարին, թե՝ ոչ, և արդյոք մարզպետարանը հետամուտ է եղել հարցի կարգավորմանը, թե՝ ոչ:
2. արդյոք խնդրի կարգավորման վերաբերյալ Արենի համայնքի ղեկավարը տրամադրել է տեղեկատվություն մարզպետարանին, եթե այո, ապա՝ խնդրի կարգավորման ինչ տարբերակ է առաջարկվել, եթե ոչ, ապա՝ ներկայումս

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ Մ...
Մուտքի թիվ 0467
23. 01. 2020

ինչպիսի գործողություններ են կատարվում բարցրացված խնդրի կարգավորման համար:

Կանխավ շնորհակալություն:

Կից ներկայացնում եմ փաստաբանի թիվ 774 արտոնագրի պատճեն:

Փաստաբան Հ. Վարդանյան

Փաստաբանական հարցման պատասխանը խնդրում եմ ուղարկել ՀՀ, ք. Երևան, Թումանյան 20 փող., բն. 7 հասցեով՝ փաստաբան Հովիկ Վարդանյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր N 774

ՀՈՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Лицензия N 774
на право адвокатской деятельности

ОВИК ВАРДАНЯН

License N 774
of advocate's activity

HOVIK VARDANYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

Նախագահ
Председатель
President

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ
Р. СААКЯН
R. SAHAKYAN

19.10.2007